այլևայլ խօսին, ինքն ևս քարոզէ, և թերևս ի մօտերս ի լուսաւորիչ գայ. և առ մեզ ոչ զբարի և ոչ զչար լսեմք ի նմանէ։ Յետ սորա գիտելի է զի ի 13 դեկտեմբերի, թագաւոր քաղաքիս[1] մեռաւ, և ի նոյն օր եղբայր սորին Օսման[2], ի տեղի նորին կացուցաւ խաղաղութեամբ և յետ վեցից աւուրց մեծահանդէս և փառաւոր հանդիսացուցումն թրակապութեան նորին եղև։ Եւ ի միւսում աւուր ել հրակիզութիւն. մահմուտ չարսուն և բազումք տունք այրեցան. տասն և վեց ժամ տևեաց հրակիզութիւնն. և գինեվաճառաց պանդոկք և կրպակք մինչև ցայժմ փակեալ կան։ (Հ. Միքայէլ առ Մելգոնեան, 1755 յունվ. 1. [Պոլիս])։

ՌՃԲ.

Մինասայ Արհի եպիսկոպոսին Գերապայծառ Վարդապետին մերոյ, որ և ետ յանցեալ ամառան յօրինել ստուգայիւ, և գեղեցիկ պատկերօք զառաստաղ զրգատան, խոստանալով կատարել և զայլն ամենայն, բարւոք առնէք գրել երբեմն զգիր առանձին ի մխիթարութիւն նորա։ (Մելգոնեան առ Հ. Իգնատիոս, 1755 փետր. 18. [Ս. Ղազար])։

ՌՃԳ.

Նոր թագաւորն զվէզիրն վերոյց[3], որ զայնքան դղրդմունս եհան վասն զգեզտուց և ձևոց, որ կարծիւր գոլ ի թագաւորէն, բայց ոչ էր այնպէս, այլ ի վէզիրէն, վասն այսմ ուրախացան ժողովուրդք։ (Հ. Միքայէլ առ Մելգոնեան, 1755 փետր. 21. [Պոլիս])։

ՌՃԴ.

Վասն ցրտութեան եղելոյ աստ ի Վենետիկ ծանիր, զի մեստրայու մինչև ի Վենետիկ եկին գալելով մարդիք ի վերայ ծովուն սառուցելոյ. և ոչ այս միայն այլև սայլիւ բերէին զբեռինս ի վերայ ծովուն իբր ի վերայ ցամաքի։ Այլ և ի բազում տեղիս վասն անցից, զառջինալեօթսն[4] բերէին և բեկանէին զսառն, զի կարասցէ անցանել նաւ, նաև բազում չաֆիք սառեցան ի ցրտոյ։ (Մելգոնեան առ Հ. Զաքարիա, 1755 ապրիլի 12. [Ս. Ղազար])։

ՌՃԵ.

Ի մէջ ռամազանին մնացեալ չորս օր պայրամին բացեալ էին զխորագոյն կէրիզն չարսըին առաջի խալփախճոց. և յանցանելն ընդ այն չէրիէթճին, այսինքն դատաւորն մահմուտ փաշային ձիով, ասացեալ են նմա հայք ոմանք. էֆէնտի մի՛ անցաներ, զի ոչ կարես և նեղ է անցքն. և ի ոչ լսելն նորա և յանցանելն և ի խրտնուլն ձիոյն, նախ ինքն, և ապա ձին զկնի նորա անկան ի մէջ աղտեղութեան աղբին. և թաղեալն յաղբն սատակեցաւ, և ձին զերծաւ. և այսպէս մուսպարէք օրեր նոցա աղբոտեցան, ասեն, թէ ի նմին աւուր զանիրաւ դատ ինչ արարեալ է, և վասն այն պատուհասեցաւ ի տեառնէ։... Ի յուլիսի 10 յաւուր պայրամին եղև եանղրն մեծ յստամպօլ իբրև ժամս ժգ, սկսեալ ի խատիլլիմանէն և վերջացեալ ընդ զառի վեր լերինն մինչև յետկոյս սէտէֆճոց և այրեցան տունք հարիւրաւորք բնաւքն ի տաճկաց։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1755 ցուլիսի 14. [Պոլիս])։

---

1. Մուստաֆա Գ.։
2. Օսման Գ.։
3. Այսինքն Օսման Գ. մէջտեղէն վերցուց զԱլի փաշան։
4. Arsenalotto = Գործաւոր կամ զինուոր նաւարանի։